

**Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ՀՀ առևտրային բանկերի դիրքի վերլուծություն,
2010 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով**

ՀՀ ՊԵԿ-ի կողմից հրապարակված¹ առաջին 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված են Հայաստանի 20 առևտրային բանկերը, որոնք թվով կազմում են ներկայացված կազմակերպությունների 2 տոկոսը: Նախ նշենք, որ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ կետի առևտրային բանկերի հիմնական գործառնությունները ազատված են ԱԱՀ-ից և ընդհանրապես, ելնելով գործունեության բնույթից առևտրային բանկերը նաև այլ տեսակի անուղղակի հարկեր վճարող չեն: Արդյունքում, բնականաբար, 1000 հարկատուների ցանկում առևտրային բանկերը անուղղակի հարկերի վճարման ցուցանիշով տեսականորեն պետք է զբաղեցնեն վերջին տեղերը: Իհարկե ներկայացված ցանկում բանկերը չեն գրավում առաջին շարքերը, բայց հատկանշական է, որ օրինակ՝ 149-րդ և 167-րդ տեղերում են, համապատասխանաբար ԷյՋ-Էյ-Բի-Սի և ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿԵՐԸ, ինչը, հաշվի առնելով ներկայացված նախապայմանները՝ բարձր ցուցանիշ է:

Ընդհանրական պատկերացում կազմելու նպատակով վերլուծենք ընդամենը հարկերի, շահութահարկի և անուղղակի (այդ թվում ԱԱՀ) հարկերի թվային շարքերը, 1000 կազմակերպությունների համար: Ընդամենը հարկերը բոլոր 1000 կազմակերպությունների գծով կազմել է 432.8 մլրդ. ՀՀ դրամ իսկ միայն բանկերի գծով՝ 13.01 մլրդ դրամ, կամ ընդհանուրի 3 տոկոսը: Այստեղ միանգամից նկատենք, որ բանկերը նույնիսկ ԱԱՀ չվճարելու պայմաններում միջին հաշվով ցանկում խոշոր հարկատուներ են. երբ թվով կազմում են 2 տոկոս, իսկ վճարված հարկերով 3 տոկոս: Ներքոհիշյալում ներկայացնենք ընդամենը հարկերի նկարագրողական վիճակագրությունը, առևտրային բանկերի և մնացած կազմակերպությունների համար, առանձնացված տեսքով (Աղյուսակ 1): Աղյուսակից երևում է, որ առևտրային բանկերի ընդամենը վճարված հարկերի միջինը՝ 650.7 մլն. դրամ գերազանցում է մնացած կազմակերպությունների միջինին, որը կազմել է 428.4 մլն. դրամ: Նույն և ավելի սուր միտումն է նկատվում նաև մեղիան ցուցանիշի գծով, համապատասխանաբար՝ 469.9 մլն և 151.1 մլն դրամ:

¹ ՀՀ ՊԵԿ ցանկեր - <http://www.taxservice.am/index.php?menuID=173&tid=2&pid=&lng=9>

Աղյուսակ 1

| <i>Առևտրային բանկերի ընդամենը հարկեր</i> | | <i>Մնացած 980 կազմակերպությունների ընդամենը հարկեր</i> | |
|--|-------------|--|-------------|
| Mean | 650681.391 | Mean | 428400.2843 |
| Standard Error | 129480.2932 | Standard Error | 41836.36779 |
| Median | 469921.49 | Median | 151161.97 |
| Mode | #N/A | Mode | #N/A |
| Standard Deviation | 579053.4749 | Standard Deviation | 1309685.472 |
| Sample Variance | 3.35303E+11 | Sample Variance | 1.71528E+12 |
| Kurtosis | 4.665180799 | Kurtosis | 86.74645394 |
| Skewness | 1.917311629 | Skewness | 8.690275301 |
| Range | 2442357.85 | Range | 16438224.79 |
| Minimum | 69734.21 | Minimum | 65019.8 |
| Maximum | 2512092.06 | Maximum | 16503244.59 |
| Sum | 13013627.82 | Sum | 419832278.6 |
| Count | 20 | Count | 980 |

Ուղղակի հարկերի ընդհանուրը՝ շահութահարկի և եկամտահարկի գծով բոլոր 1000 կազմակերպությունների գծով կազմել է 91 մլրդ. ՀՀ դրամ իսկ միայն բանկերի գծով՝ 11.5 մլրդ դրամ, կամ 12.6 տոկոսը: Այստեղ բանկերը էապես առաջնային դիրքերում են: Համեմատության համար նշենք, որ ուղղակի հարկերով, 1000 առաջին խոշոր հարկատուների ցանկում գրեթե բոլոր բանկերը՝ 18 առևտրային բանկ, գտնվում են առաջին 100-ակի ցուցակում (Գծանկար 1): Ներքոհիշյալում ներկայացնենք շահութահարկի և եկամտահարկի նկարագրողական վիճակագրությունը, առևտրային բանկերի և մնացած կազմակերպությունների համար, առանձնացված տեսքով (Աղյուսակ 2): Աղյուսակից երևում է, որ առևտրային բանկերի վճարված շահութահարկի և եկամտահարկի միջինը՝ 574.4 մլն. դրամ մի քանի անգամ գերազանցում է մնացած կազմակերպությունների միջինին, որը կազմել է 81.4 մլն. դրամ: Նույն միտումն է նկատվում նաև մեղիան ցուցանիշի գծով, համապատասխանաբար՝ 396.3 մլն և 25.8 մլն դրամ:

Աղյուսակ 2

| <i>Առևտրային բանկերի ուղղակի հարկեր</i> | | <i>Մնացած 978 կազմակերպությունների ուղղակի հարկեր</i> | |
|---|----------|---|----------|
| Mean | 574396.2 | Mean | 81387.93 |
| Standard Error | 115826 | Standard Error | 9514.005 |
| Median | 396297.7 | Median | 25781.4 |
| Mode | #N/A | Mode | 4000 |
| Standard Deviation | 517989.8 | Standard Deviation | 297379.2 |
| Sample Variance | 2.68E+11 | Sample Variance | 8.84E+10 |
| Kurtosis | 4.921231 | Kurtosis | 197.6009 |
| Skewness | 1.978391 | Skewness | 12.60523 |
| Range | 2188983 | Range | 5669841 |
| Minimum | 63238.1 | Minimum | 46.8 |
| Maximum | 2252222 | Maximum | 5669888 |
| Sum | 11487923 | Sum | 79516006 |
| Count | 20 | Count | 977 |

